

ՄԻ ԷՉ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Երևանյան առաջին արշավանքն իսկաճատեսի նկարագրությամբ)

Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայտնի է, որ հորհրդային Միության փլուզումից հետո վերանայվեցին մարքսիզմի շատ հիմնադրույթները։ Հիմնավոր վերանայման անհրաժեշտությունը զգացվեց առաջին հերթին պատմագրության բնագավառում։ Պատմագիտությունը, թեև դանդաղ, բայց լծվել է պատմական իրողությունները փաստական ռեալ հիմքի վրա ճշմարտացի մեկնաբանելու հրատապ դարձած խնդրին։ Սակայն նույնքան կարևոր պատմական սկզբնաղբյուրները, վավերագրերն ու նյութերն իրենց անաղարտ տեսքով հրատարակելու գործընթացը թվում է, հապաղում է։ Մեծ մասամբ դրանք հրատարակվել են կրթ-ճատումներով, մարքսիստական տեսակետին անհարիր վավերագրերը անտեսելով կամ ժողովածուներից դուրս թողնելով։ Փորձ չի արվել բաղդատման կամ լրացուցիչ տվյալների հիման վրա պարզելու այս կամ այն աղբյուրի իրական արժեքը, նրա հավաստիությունը։

Ուստի, ժամանակին պատմագիտության մեջ տեղ գտած թերություններն ու սխալները հաղթահարելու և վերացնելու արդարացի միտումը անհրաժեշտաբար պետք է տարածել նաև պատմական աղբյուրների գնահատման ու հրատարակման բնագավառի վրա։ Չափանիշ, որի թելադրանքով է պայմանավորված նաև ներկա շարադրանքը։

1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում երևանյան առաջին արշավանքը բաղմիցս քննարկվել է պատմագիտական ուսումնասիրություններում։ Փաստ է նաև, որ հետազոտողներն այս հարցում գրեթե համերաշխ են։ Երևանյան արշավանքի անհաջողությունը դիտարկվում է մի կողմից որպես ռուսական բանակի հրամանատար Յիցիանովի անվճռական գործողությունների հետևանք, մյուս կողմից՝ Երևանի Մամադ խանի նախաձեռնած դիվանագիտական խորամանկ խաղերի արդյունք¹։

Մեր կարծիքով հետազոտողների ուշադրության վրիպել են այդ արշավանքի կարևոր շատ մանրամասներ ու պարագաներ, որոնք նոր խորհրդածոխությունների տեղիք են տալիս։ Այս առումով ուշադրության է արժանի երևանյան արշավանքի մասին մի ուսումնասիրություն, որի հեղինակն այդ դեպքերի անմիջական մասնակիցն ու ականատեսն է։ Գիրքն ունի «1779—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» խորագիրը և լույս է տեսել Պետերբուրգում՝ 1811 թ., Հովհաննես սարկավազ Հովհաննիսյանի ռուսերեն թարգմանությամբ։ Հեղինակը իշխան Գևորգ Խուբովն է (Խուբյան)։ Նրա հայերեն բնագիրը դեռևս հայտնաբերված չէ²։

Նշենք, որ Խուբովի գիրքը մեր պատմագիտության մեջ, բացի Մելիքսեթ-բեկի վերոհիշյալ հտղվածից, միանշանակ բացասական է ընդունվել։

1 Լեո, Հայոց պատմություն, հ. 4, Ե., 1984, Զ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978, Վ. Ա. Գրիգորյան, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, Վ. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Ե., 1978 և ուրիշներ։

2 Լ. Մելիքսեթ-բեկ, Գևորգ Խուբով (Նյութեր և նոթեր) (Տեղեկագիր, 1950, № 2)։

Լեւոն, օրինակ, շնայած չի խուսափում հուրովից մեջբերումներ կատարել, սակայն նրան անվանում է չափազանցությունների հեղինակ: Մյուս ուսուցիչները կա՛ն շրջանցել ևն հուրովին, կամ էլ մտացածին են համարել նրա հաղորդած տեղեկությունները: Սակայն, որքան էլ զավեշտական է, հուրովի գրքի արժանիքների մեջ համոզվելու կամ չհամոզվելու կարիքն ուղղակի չկա: Հեղինակն իր գրքում այդ մասին ջանադարաբար հոգացել է. «Իմ ցանկությունը,—գրում է հուրովի,—կայանում է նրանում, որ այս համառոտ նկարագրությամբ ընթերցողները պարզ և հավաստի (ընդգծումը մերն է—Հ. Հ.) պատկերացում կազմեն իրադարձությունների մասին և գուր ժամանակ չկորցնեն... քանի որ իմ և առանց իմ ներկայության կատարված իրադարձությունները հանդամանտից և ճշմարտացի նկարագրելու հասարակ բոլոր ջանքերը գործադրելի, որպեսզի նամակների ձևով հավաքեմ ինչպէս ողորդական, այնպէս էլ պարսկական պաշտոնյաների տեղեկությունները»³, հուրովի մեկ այլ մտավարկություն էլ է ունեցել. «Եթե իմ աշխատանքը թույլ համարվի և անբավարար..., համարձակվում եմ հուսալ, որ և՛ իմ ուրիշի նկարագրություններն ավելի բավարար լինեն քան իմը, գոնե թող դեհատվին իմ ջանքերը, որոնք ես գործադրելի այս իրադարձությունների նկատմամբ ժամանակաւ համարում եմ: Ես հուրովի իր գիրքն ավարտում է հետևյալ պարբերությամբ. «Նրանք, ովքեր կկասկածեն նկարագրված իրադարձությունների արժանահավատությունը և կփոխեն իրենց մտքերը, այն ժամանակ թող ընդունակ լինեն կարդալու իշխան օրհանդիսի, Հովհաննէս Լալիսկի, Ի մյուս պաշտոնյաների նամակները, որոնք ամբողջությամբ պահվում են ինձ մոտ»⁴:

Իշխան հուրովի Սիմեոն Երևանցի կաթողիկոսի աղջականն էր: Հեղինակը հաղորդում է, որ երիտասարդ տարիներն ինքն անց է կացրել Էջմիածնում, դաստիարակվել «կաթողիկոսի աշխատանքի հովանավորությամբ, լավագույն ուսուցիչների մոտ»⁵:

Հուրովին իր գիրքն ավարտում է վրաց Հերակլ թագավորի՝ 1779 թ. Երևանի խռովություն կատարած արշավանքի նկարագրությամբ. «Վրաց թագավոր Հերակլը,—գրում է նա,—ատելությունից, որ տածում էր... դեպի Երևանի Հուսեյին-Ղուլի խանը, մեծ րանակով պաշարեց Երևանը և ամայացրեց այդ մարտը»⁶: Կարևորն այստեղ, իհարկե, Հերակլի երևանյան արշավանքի նկարագրությունը չէ, այլ հեղինակի հետևյալ վկայությունը, որը հանրազանց լուրջ է մասնավոր պատմադիպական ուսումնասիրություններում: «Հայերը,—գրում է այնուհետև հուրովի,—որոնք այդ ժամանակ թաքնված էին լեռներում և քարանձավներում, տարվեցին Վրաստան և այնտեղ նրանք ստիպված էին ապրել ծայր աստիճան աղքատության մեջ: Շատերը կլիմայի փոփոխությունից վաղաժամ ավարտեցին իրենց կյանքը»⁷, Ի դեպ, հուրովի այս տեղեկությունը հաստատում է նաև ուս պատմաբան Պ. Իսկուկովը⁸:

Հուրովի գիրքն, անշուշտ, առանձնանում է XIX դ. հայագիտական մյուս ուսումնասիրություններից: Հեղինակն իրադարձությունները նկարագրում է, ինչպէս ասվեց, ականատեսի աչքերով և ո՛չ միայն սկանաւեսի: Սկսւմ է 1796 թ. Զուրովի՝ 1796 թ. պարսկական արշավանքի ժամանակ սկսված

³ Е. Хубов, Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние 30 лет (1779—1809 гг.), СПб., 1811, с. 95.

⁴ Նույն տեղում, էջ 97:

⁵ Նույն տեղում, էջ 130:

⁶ Նույն տեղում, էջ 31:

⁷ Նույն տեղում, էջ 41:

⁸ Նույն տեղում:

⁹ П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, СПб., 1869, ч. I, с. 73—74.

բանակցություններում էա եղել է կոմսի և Երևանի խանի միջնորդը. «Երևանի Մամադ խանը,—գրում է Գ. Խուրովը,—հարյուրապետ Գաբրիելի միջոցով ինձ կաշկեց իր մոտ և արժանացրեց իր վստահությանը: Նա գաղտնի նամակադրություն ուներ կոմսի հետ և խոստանում էր նրա նկատմամբ պահպանել հավատարմություն և անկեղծություն իր գործողություններում... Խանը ցանկություն ուներ անցնել Ռուսաստանի տիրապետության տակ և ալդայիսով անվտանգ պահել իր տիրությունները: Եվ, որպեսզի շրջապատին կասկածի տեղիք չտա,—շարունակում է Խուրովը,—նա հանգուցյալ կաթսղիկովին հարգանքի պատրվակով հաճախ ինձինք խորհուրդներ էր հարցնում և սմեկն անգամ նկատում էի, որ նրա՝ ռուսական հպատակություն ընդունելու ցանկությունը մեծ էր»¹⁰:

Գ. Խուրովը, մանրամասն նկարագրելով Զուրովի արշավանքը և այդ ընթացքում Երևանում ծավալված իրադարձությունները, գտնում է, որ Մամադ խանի՝ ռուսական հպատակություն ընդունելու մտադրությունը ամենից առաջ դայիս էր նրանից, որ նա «ատում էր Աղա-Մահմեդ շահին և խրեզրում էր Զուրովից»՝ հնարավորին չափ արագացնելով զորքերի շարժումը Երևանի սահմանները»¹¹: Մամադ խանի ալսպիսի կողմնորոշումը, թերևս, կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ նա կանխատեսում էր ռուսական զենքի հաղթանակը, որը վաղ թև ուշ Ռուսաստանի սահմաններն Անդրկովկասում հասցնելու էր մինչև Արաքս գետը:

Խուրովի հավաստմամբ, Մամադ խանը նույնիսկ համարձակվեց օգնություն խնդրել Վրաստանում գտնվող Հովսեփի արքեպիսկոպոսից. «...ևս պետք է մեկնել նրա մոտ և բոլոր ջանքերը գործադրելի Հերակլին և զենկերայ Կոռասկովին համոզելու, որ նրանք... մեզ պաշտպանեն շահից»¹²: Եվ, որպեսզի ընթերցողին համոզի Երևանի խանի կողմից այդ քայլին դիմելու հանգամանքների մեջ, Գ. Խուրովն անդրադառնում է Աղա-Մահմեդի արշավանքին և նրա մահից հետո Իրանում ծավալված զահակալական կռիվներին: Նա հանգամանորեն ներկայացնում է Երևանի և Նախիջևանի խաների՝ շահին ընդդեմ դաշինքի դրդապատճառները և այլ մանրամասներ, որոնք դուրի չեն հեռաբերությունից: Խուրովի հաղորդման համաձայն, երբ իշխան Յիցիանովը ժամանում է Վրաստան, Երևանի խանից պահանջում է, որպեսզի «վերջինս մոռանա իր շահագրեծ վերաբերմունքը և աշխատի Դանիելին վերադարձնել կաթողիկոսական աթոռ»¹³: Ուշագրավն այստեղ այն է, որ Երևանի խանը պատրաստակամություն է հայտնում՝ կատարելու Յիցիանովի պահանջը, պայմանով, որ «...իշխանը (Յիցիանովը) իր հովանավորության տակ ընդունի Ախալցխայի փաշային (վերջինս իր հարևանների կողմից հաճախակի հարձակումների հետևանքով պատսպարվել էր խանի մոտ—Հ. Հ.) և իր զորքի պահպանության ներքո նրան ուղեկցի իր նախկին տիրությունները»¹⁴:

Պետք է նշել, որ Երևանի խանի հետ ունեցած իր հարաբերություններում Յիցիանովն առհասարակ ավելի քան կտրուկ էր, և այդ վերաբերմունքը մշտապես երկրորդականի առաջ էր կանգնեցնում Մամադ խանին. «Խանը չէր հավանում, թե որն ընտրել իր փրկության համար,—գրում է Խուրովը,—մի կողմից, Հովհաննես եպիսկոպոսը նրան համոզում էր ռուսական հպատակություն ընդունել, մյուս կողմից, նա չէր ցանկանում իրեն ենթարկել զթախտ շիրտության»¹⁵: Իհարկե, խանն արդեն միամիտ չէր, որ նստեր և սպասեր Յիցիանովի ժամանելուն: Իր որոշման մեջ վերջնականապես հա-

10 E. X y o b, նշվ. աշխ., էջ 8:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, էջ 13:

13 Նույն տեղում, էջ 18:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում, էջ 22:

մոլորակի մասնաժամանակ խառնուրդի միջոցով և ուղարկում երկու բանազնաց-
ներին՝ սկզբում էյնայի խանին, ապա՝ Երևանի Ասլան Բեկին, «որի հավա-
սարմաթյան մեջ ավելի էր համոզված»։ Բանազնացները, ինչպես վկայում
է հուրովը, վորձել են հանգստացնել խանին, ասելով, որ ոռոսները չեն
հարձակվի։

Կ. հուրովի համոզմամբ, Երևանի խանի անհանգստությունն անտեղի
չէր. «Շահի օգնականները թարուն թակարդ էին նախապատրաստում նրա
համար... Իր եղբայրների հետ միասին նրան բերեցին շառի մոտ, որի ա-
սաջ նա կանգնել էր ինչպես զոհասեղանի առջև մահվան դատապարտված
խորտացող մի դուռնու մոտ, այդ բանասարկությունը շահին խորհուրդ տվեց
վառելիք կանչել տալ նրա կնոջն ու երեխաներին...»¹⁶։ Անհանգստանալու
յուրջ պատճառներ ուներ նաև նախիջեանի Քալբայի խանը. «Նա երբեք չէր
մոռանում ունի դաժանությունը, որ ցուցարկեց նրա հանդեպ շահը,—
դրո՞ւմ է հուրովը Քալբային չճանաչեց Բարա խանին և հրաժարվեց նրան
հարկ վճարելուց։ Ձայրացած այդ հանդուժողությունից, շահը նրանցից զոռք
ուղարկելը՝ նրան կենդանի բռնելու համար, սակայն խառն հասցրեց փախ-
չել Երևան, որանց իր դաշնակցից Երևանի խանի հետ միասին ամեն կերպ
ձգտում էին պաշտպանել իրենց անվասանությունը... շահի հարձակու-
մից»¹⁷։

Որքան էլ դավաշտական է, սակայն մենք ես հայտնվում ենք տրա-
մարանական երկու հակադիր տարրերակների ընտրության առջև։ Եթե հու-
րովը ճիշտ է ասում, ապա հետաքննություններն ավելի հեռու են դնում ոռոս-
պարսկական պատերազմի պատճառների ու, որ ամենակարևորն է, ոռո-
սական զորքերի երևանյան առաջին սարժավանքի պատմությունը, համե-
նաչափ հեկա, որոշ շտկումների կարիք ունի Մյուս կողմից՝ Եթե հուրովը
ծայրահեղությունների մեջ է ընկնում, ապա այդ դեպքում 1805 թ. Ղա-
րաբաղի, Շուրաքայի, Շաքիի և Շիրվանի խանությունների ռուսական հպա-
ռակության ընդունումը դառնում է սոսկ պայմանագրային մի ակտ։

Մեր համոզմամբ, հուրովը չափազանցում է, բայց փաստերը չի ա-
զատում։ Եվ որպեսզի համոզվենք դրանում, բերենք այսպիսի մի փաս-
տարկ. հեղինակը ցավով պատմում է, թե ինչպես երկու հայեր, իրենց հետ
վերցնելով զինի և հաց, փորձ են անում բերդից դուրս գալ և միասնալ ոռո-
սական բանակին։ Պահանջները, սակայն, նրանց բռնում է և բերում Քալ-
բայի խանի մոտ. «Ժամանակ չտալով նրանց դռնն պատասխանել,—գրում
է հուրովը,—խանը հրամայեց կապել թնդանոթին և կրակել։ Վճիռն արադ
ի կատար անվեց»¹⁸։ հուրովն այդպիսի դեպքեր էլի է հիշատակում։

Ուշագրավ է նաև այն, որ Լեոն հայոց պատմության նորագույն շր-
ջանի իր դասախոսություններում այդ մասին ոչինչ չի ասում։ Այնուհան-
դերձ, հուրովի հաղորդած տեղեկություններից Լեոն, չէինք ասի առատո-
րեն, սակայն որոշ չափով օգտվել է։

Շարունակենք քննարկել հուրովի հաղորդած տեղեկությունների հա-
վաստությունը. «Նրանք (խաները—Շ. Շ.),—շարունակում է հուրովը,—
համեմատարեցին մեզ իրենց անունից իշխան Յիցիանովից օգնական զոր-
քեր ինչպիսի, քանի որ շահի որդին արդեն մեծ լրանակով մոտենում էր Ե-
րևանին... Նրանք մեծ անհամբերությամբ էին սպասում նամակի պատաս-
խանին։ Շուտով Երևան եկան երկու հայեր՝ մայրը Նահապետ Արշակովի
հետ միասին և հաստատեցին, որ ռուսական զորքերը շուտով կլինեն նրանց
մոտ...»¹⁹։ հանկար շղանկանալով հանձնվել, փակվեցին ամրոցում և սպա-
սում էին ոռոսական օգնության ժամանակուն, շարունակում է հուրովը։

¹⁶ Նույն տեղում, էջ 131։

¹⁷ Նույն տեղում, էջ 13—14։

¹⁸ Նույն տեղում, էջ 66։

¹⁹ Նույն տեղում, էջ 23։

«Մամադ խանը ջանքում էր իր բարյացակամ վերաբերմունքը ցույց տալ դեպի մեզ... նա մտադիր էր ընդդեմ հանձնել ռուսական բանակին և ժամ առ ժամ սպասում էր ռուսների երևալուն»²⁰:

Այդ բնթացքում բավականին աշխույժ բանակցություններ են ընթանում խանի և Ցիցխանովի միջև, ընդհուպ մինչև ամենատարբեր հարցերի մասին միմյանցից խորհուրդներ հարցնելը: Խուբովն, օրինակ, այսպեսի մի միջադեպի մասին պատմում է. «Հովհաննես եպիսկոպոսը, որն իշխանի կողմից հրավիրված էր արշավանքին՝ որպես այստեղի քաղաքականության և սովորույթների դատակ մարդ,—դրում է նա,—նամակ է բերում բերդ, ինչպես թողել էին ճակատամարտի դաշտում... Ցիցխանովը պարսկական կողմին խնդրել էր մի մարդ ուղարկել, որը գիտեր այդ արհեստը: Խանը կարողացավ այդ նամակը,—շարունակում է Խուբովը,—ծածաղիկով ասաց, թե եվրոպական քաղաքականությունը կանգ չի առնում նույնիսկ այն բանում, ինչը նրան անհասկանալի է: Հրեականագործից բացի, բերդից ուղարկվեցին նաև մեծ քանակությամբ արկեր: Մենք մեր կողմից եպիսկոպոսին խնդրեցինք,—վկայում է Խուբովը,—մտածել համընդհանուր օգուտի մասին և զեկուցել իշխանին, որ պարսիկները խորին հուսահատության մեջ են և ռուսներին անհանգստացնել նրանք չեն կարող...»²¹:

Ընթերցելով Խուբովին, ակնհայտ է դառնում հեղինակի այն ջանադրությունը, որ իր նկարագրությունների ողջ հենքը մի կողմից Երևանի խանի և շահական արքունիքի միջև ծագած հակասությունների առկայությունն է, մյուս կողմից՝ Ցիցխանովի անվերապահ հաղթանակը Աբբաս-Միրզայի բանակի նկատմամբ: Որպես հաստատում, Խուբովը բերում է Մամադ խանի՝ Ցիցխանովին ուղղված մի նամակի բովանդակությունը. «Ընդունելով՝ իմ ծրագրերը,—գրում է խանը,—ես կատարում եմ խոստումս (ընդգծումը մերն է) —Հ. Հ.), չնայած մինչև այժմ կասկածում էի Ձեր արշավանքի հաջողության մեջ, բայց որ մի երկրի դեմ արշավելիս, որը ոչ մի հարաբերություն և մերձեցում չի ունեցել Ձեր պետության հետ, հարկ էր լինել մեծ թրվով պորթ... Ես հիշում, որ շահը մեծաքանակ բանակով կպաշտպանի այս մարզը, սակայն այժմ ևս արդեն համոզվեցի, որ պարսիկները չեն կարող հաղթել քաղերին և հմուտ ռուսներին: Այսպիսով,—ավարտում է խանը,—ենթարկվելով ինձ ռուսական տիրապետության, ես քաղաքը հանձնում եմ նորին գեղադանցությանը և որպես հաստատում՝ ուղարկում եմ բալախենդեր»²² (ընդգծումը մերն է—Հ. Հ.): Հարցն այստեղ, իհարկե, այն չէ, թե հոգու խորքում Մամադը երազում էր ռուսական հպատակություն ընդունել: Մենք ևս լիովին բացառում ենք նման իրողության գոյությունը: Սակայն, չենք կարող հաշվի չառնել նաև այն հանդամանքները, որոնք ուղղակի ստիպում էին Մամադ խանին՝ ընդունելու այդ հպատակությունը: Մենք կրկին անգամ ընդգծում ենք. ռուսական բանակի երևանյալ առաջին արշավանքն անպայման բարեհաջող ավարտ կունենար, եթե չլիներ Ցիցխանովի օրած մեկ այլ նամակում Մամադ խանը ստիպված էր արդեն «անկեղծորեն» բացատրել իր այդ որոշման դրդապատճառները. «Քաղալի խանին Մուհամմեդ շահը գրկեց տեսողությունից: Ավելին՝ մեր կանայք, երեխաները և հարազատներն այժմ գտնվում են Բաղա խանի մոտ... Այս բոլորին մենք դիմացել ենք միայն այն հույսով, որ ակնկալում ենք Ռուսաստանի հովանավորությունը: Մենք ոչինչ չենք ուզում Ձեզանից...»²³:

²⁰ Նույն տեղում, էջ 24:

²¹ Նույն տեղում, էջ 39:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 47:

Գ. Խուրոփն այս կերպ է բացատրում չկայացած համաձայնությունը. «Հայերից ոմանք,—դրում է նա,—ոոոսք դառնում էին Յիցիանովի զորակայանում, խանի այս բայր մեկնարանեցին որպես իրենց հարեհեհի համար վնասակար... Մուրդա Մուհամմեդ րեկն անարդյունք վերադարձավ իրերդ...»²⁴ Ուրեմն, ինչո՞ւ չի կայացել համաձայնությունը։ Որքանով նկատեցինք, Խուրոփն այստեղ որոշակի անուններ չի նշում, սակայն խորհելու արժեք է, համենայն դեպս, տալիս է։ Մեր կարծիքով, Խուրոփի նշած «ոմանց» թվում առաջին հերթին պետք է նկատի ունենալ մեղ քաջաճանճ Ներսես Աշտարակեցուն, որը սլարսից տիրապետության վերաջման ամենից ջերմեղանդ կողմնակիցներից էր²⁵, Իսկ եթե դրան ավելացնենք այն հանդամանքը, որ սկսած XVIII դ. երկրորդ կեսից հայ հասարակական-քաղաքական շրջանակներում տեղեկավորվում էր Ռուսաց կայսրության հովանու ներքո հալոց պետականության վերականգնումը, ուստի ակնհայտ է դառնում, որ պարսից խանի ռուսական հպատակության ընդունումով հարցը, փաստորեն, օրակարգից հանվում էր։ Ահա թե ինչու, հայոց մեծամեծների և հասկապես ներսես Աշտարակեցու՝ Յիցիանովի վրա դրածադրած ճնշումն, անշուշտ, կարող էր որոշիչ դառնալ այդ իրավիճակում։

Պատմադիտական ուսումնասիրություններում երևանյան արշավանքում ստեղծված այս իրավիճակը բացատրվում է դիվանագիտական հետևյալ կետով. «Գնեևրայ Յիցիանովի, պաշարելով բերդը, վճռական դրոհի անցնելու փոխարեն սկսեց անօգուտ րանակցություններ վարել Երևանի խանի հետ՝ իրերդն առանց դիմադրության իրեն հանձնելու համար»²⁶, Խուրոփն այստեղ էլ մեկ խորհելու առիթ է տալիս. արդյո՞ք դրանք անօգուտ րանակցություններ էին։ Շարունակենք քննել Խուրոփի հարցադրումները. նա գրում է, որ խանի այս վերջին դիմադրության անհաջողությունը շատ րանով փոխեց պատերազմի հետագա ընթացքը։ Օգտվելով Յիցիանովի անողորմությունից, «պարսիկներն ամեն կերպ աշխատում էին համոզել խանին՝ վրեժխնդիր լինել, խորհուրդ էին տալիս նրան անցնել շահի կողմը և միասնաբար պաշապանվել»։ Նրանք սկսեցին շուրս կողմից ամրացնել բերդը և զորքով և հրետանով։ Հաջորդ օրը,—շարունակում է Խուրոփը,—բոլորի համառանսպասելի՝ ուսաներն արձակեցին առաջին կրակոցը... բոլորը սառսափի մեջ էին։ Հուլիսի 5-ին արձակվեց երկրորդ կրակոցը»²⁷։

Խանի անկայուն վիճակի մասին է վկայում նաև այն փաստը, որ այս ամենից հետո նա անվնաս թողեց Խուրոփին և Գաբրիել յուղբաշուն. «Կանչելով իր մոտ՝ խանը սկզբում դաժան տեսք ունեւ և կոպիտ էր խոսում մեղ հետ. «Ահա միջնորդության ձեւ արդյունքը, ձեւ խորհրդով մենք ձեռնարկեցինք այնպիսի միջոցներ, որպեսզի խաղաղություն հաստատենք... սակայն զրանով մթազեեցինք մեր նախնիների պատիվն ու փառքը...»։ Հետագայում, սակայն, հիշատակելով մեր ծառայությունները,—դրում է Խուրոփը,—նորից մեղանից խորհուրդներ խնդրեց...»²⁸։ Հետաքրքիր է նաև Մամադ խանի արձագանքը կատարվածին. «Իմ հպատակները Գաբրիել հարյուրապետից և իշխան Գևորգ Խուրոփից րավականին յսել էին՝ ռուսական հզոր տերության և նրա հմաստուն միապետի մասին,—հայտնում էր խանը հաջորդ առավոտյան Յիցիանովին ուղղված իր նամակում,—մենք ցան-

²⁴ Նույն տեղում, էջ 48։

²⁵ Ռուսական ստորոնքի ռուսական նամակներից մեկում ն. Աշտարակեցու հարեհեհի հետ, որ իրեն «բախա և վիճակվել լինել Յիցիանովի րանակում, ամենուր և ամեն հարցում երանդուն և համազգեցվել եղա հետ» (ընդգծումը մերն է՝ Ղ. Ղ.), տե՛ս Գ. Յզով. Споминия Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. СХХІV.

²⁶ Տե՛ս Զ. Գրիգորյան, Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և հայ պատմական նշանակությունը, Ե. 1978, էջ 123։

²⁷ Է. Хубов, նշվ. աշխ., էջ 44։

²⁸ Նույն տեղում, էջ 50—51։

կանում ենք պատվարժան կերպով Ձեզ ընդունել բերդ, ենթարկելով ինձ ու քաղաքը Ձեր լշխանությանը... Մենք Ձեզանից ոչինչ չենք պահանջում, միայն շահի վրիժառությունից ապաստան ենք խնդրում²⁹։ Ցիցիանովի պատասխանն առավել քան կարճ էր. «Խա՛ն, շուտով դու կտեղեկանաս իմ ծրագրերի մասին և կտեսնես, թե ինչ գույներով այն կներկվի»³⁰։

Խուբովն այնուհետև մանրամասն նկարագրում է բերդի պաշարումը և ռուսական զորքի կրած անհաջողությունը։ Ուշագրավ է, որ բերդի անհաջող դրոշից հետո էլ Մամադ խանը շարունակում է Ցիցիանովին համոզել իր հավատարմության մեջ. «Չնայած իմ հանդեպ ունեցած Ձեր անբարյացակամ վերաբերմունքին,—գրում է խանը,—Ձեր նկատմամբ ես ունեմ հակառակ դգացում։ Հարկ եմ համարում Ձեզ տեղեկացնել շահի մոտալուտ արշավանքի մասին։ Մութածեբ ալն միջադեմերի մասին, թե ինչ պետք է մե՛նք ձեռնարկե՛նք ալլո դեպի ռա՛մ (ընդդժմը մերն է—Զ. Զ.)։ Եթե չեք ցանկանում լինել իմ դաշնակիցն ու պաշտպանը, ապա գոնե զգուշացե՛ք Ձեր թշնամիներին³¹։ Խուբովի վկայությամբ խանը նույնիսկ հետախույզներ է ուղարկում՝ տեղեկանալու շահական զորքերի տեղաշարժերի մասին։

Ուշադրության արժանի է նաև Խուբովի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Այդ նույն ժամանակ,—գրում է նա,—պարսկական խոլ քաղաքի զորապետներից մեկը, որը Երևանի խանի քննակալն էր, հեռացել էր շահից և ապաստան գտել Ցիցիանովի մոտ։ Իշխանը նրան ընդունեց սիրալիր ու բարեկամարար և նույնիսկ թողակ նշանակեց»³²։

Մի կարևոր մասնավորեցում էս։ պատմագիտական մեր ուսումնասիրություններում անշարժ է մնացել այն տեսակետը, թե «Մամադ խանի մեկնակալն ալլո էր, որպեսզի ժամանակ շահի և, եթե հնարավոր է, իրուսափի գոնե ռուսական զորքերի հետ բնդհարվելուց... Մամադ խանի ղեկավարիտական լարախաղացությունը...» և այլն³³, Վ. Դիրյանը, անդրադառնալով 1801 թ. Փամբակում տեղի ունեցած դեպքերի նկարագրությանը, հետևյալ հետևությունն է անում. «Մի՞թե միայն այդ ոտնձգությունները բավարար չէին եղրակացնելու համար, որ երկու խաների (Երևանի և Նախիջևանի—Զ. Զ.) ռուսական հովանավորություն փնտրելը սոսկ խաղ էր», իսկ տողատակում ավելացնում է. «Պետք է նշել, որ Երևանի խանը բավական ճարպիկ ղեկավարիտական խաղ էր վարում, այնքան ճարպիկ, որ նույնիսկ Խուբովը հաստատ համոզմունք էր հայտնում, որ նրա ձգտումն է՝ գտնվել ռուսական հովանու ներքո»³⁴։ Սակայն կարծում ենք, որ սոսկ 1801 թ. իրադարձությունների արդյունքներով չի կարելի եղրակացնել Մամադ խանի կողմնորոշման մասին և ապա՝ Խուբովի համոզմունքը միայն 1801 թ. իրադարձությունների նկարագրությանը չի ձևավորվում. նա իրողարձությունների նկարագրությանը, ինչպես ցույց է տալիս դրքի վեճակագրությունը, հասցնում է մինչև 1809 թ.։ Ավելին՝ մենք կասկածի տակ չենք դնում Վ. Դիրյանի եղրահանգումը. հարկավ, հնարավոր է, որ 1801 թ. Մամադը ղեկավարիտական խաղ էր խաղում, սակայն, չէ՞ որ իրադարձությունները կարող էին կտրուկ փոխվել. առջևում դեռ էր ուժը սկսվելու ռուս-պարսկական պատերազմը։ Բնականորեն, հարց է ծագում՝ ուրիշ ի՞նչ կարող էր ձեռնարկել Մամադ խանը, երբ ռուսական բանակն արդեն Երևանի բերդի շրջման էր։ Իրադարձությունը փոխվում էր ժամ առ ժամ։ Ուրեմն հարցի պատասխանը պետք է փնտրել հետևյալ իրողություն մեջ. պարսից խաներն իրենց

²⁹ Նույն տեղում, էջ 47։

³⁰ Նույն տեղում, էջ 48։

³¹ Նույն տեղում, էջ 52։

³² Նույն տեղում, էջ 53։

³³ Վ. Դ. Դիրյան, Արևելյան Հայաստանը 19-րդ դ. առաջին երեսնամյակին և հայ-ռուսական զարաբերությանը, Ե., 1939, էջ 171։

³⁴ Նույն տեղում, էջ 161։

վրա դրալով ուսական ղեկի գործությունը, իրենց կամքին հակառակ, իրենց ս.թ.ապետությունը որևէ կերպ երկարաձգելու միակ միջոցը տեսնում էին ուսական հաստատությունը ընդունելու մեջ և ստիպված էին համակերպվել այդ մտքի հետ։ Սա է ճշմարտությունը և ոչ թե պարսից խաների ուսական կողմնորոշումը։ Իսկ այդ ընթացքում Երևանի բերդի վրա ռուսների հեթանոսական դրոշմ սարսափի մեջ էր գցել պարսիկներին. «Հավաքվելով Քալբայի խանի մոտ և երկար խորհրդակցելուց հետո,—դրում է հուլիսովը,— պարսիկները համաձայնվեցին ռուսների առջև բացել բերդի դարպասները և ընդունել ուսական հաստատություն, եթե գլխավոր հրամանատարը երաշխավորեր իրենց կյանքի ապահովությունը... Այս լուրը բարձրացրեց մեր տրամադրությունը,—շարունակում է հուլիսովը։ Սակայն դրժախտությունը, այնուամենայնիվ, մեղ չլքեց։ Իշխան Յիցիանովն այդ ժամանակ երգումով աղատ էր արձակել իր մոտ գերված Շարուրի ղորապետին հենց այն երեկոյան, երբ մեր դեսպանորդը պատրաստվում էր գնալ Յիցիանովի մոտ։ Զորապետը բերդ հասավ մեր դեսպանորդից քիչ առաջ և պարսիկներին հետ պահեց իրենց մտադրությունից, համոզելով, որ նրանք դուր են վախենում 3600 ռուսներից, որոնցից 1500 արգեն սպանվել են, իսկ մնացածը հիվանդ զինվորներ են, որոնք զրկված են պաշարից... Այս ամենից հետո,—հավաստում է հուլիսովը,—պարսիկները դադարեցին մեղ հետ ամեն տեսակ հարարերություն ունենալուց»³⁵։

Խուրովի մեկ այլ հավաստումն է, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո «խանի շրջապատից որոշ պարսիկներ, դիտենալով դեպի ուսաներն ունեցած մեր վերաբերմունքը, մեր արյունն էին ցանկանում... Մենք այդ մասին տեղեկացրինք խանին, որն այս ամենից վրդովված՝ դուրսդրեց ինձ ընտանիքով հեռանալ Երևանից, և որպեսզի դավադիրները չհասցրեն իրականացնել իրենց ճյուղերը... ես պատրաստվում էի հեռանալ զինվորով, հանք հրամայեց իր ռուսական սպանին՝ դադանարար ինձ հեռացնել բերդից»³⁷։

Խուլովին, իհարկե, չէր կարող բաց թողնել այն հանգամանքը, թե ինչ կատարվեց Մամադ խանի հետ հետապնդում և պատմում է, թե ինչպես թաղամասում լեռնա-Միլիան, ի վերջո, վրեժ լուծեց նրանից «և իր ձեռքով զոհեց նրան համար և ձերբակալելով նրան և բնտանիքին, իր հետ տարավ Պարսկաստան»³⁸։

Խուլովի վկայակոչումն այս փաստը խոսում է այն մասին, որ պարսից ոչ բոլոր խաներին էր հաջողվում դիմակայել մի կողմից ռուսների և մյուս կողմից պարսից շահի ճնշումներին։ Ուրեմն, եթե Մամադ խանը զինվանադիտական խորամանկ քայլեր էր կատարել, ինչպես պնդում է մեր պատմագիտությունը, ապա չէր կարող հարցն այսպիսի ավարտ ունենալ։ Մեկ այլ մասնավորեցում էս. ինչպես պարզվեց, հարցը փաստորեն ունեցել է իր նախապատմությունը։ Այսպես, «Кавказский казачий корпус» ամսագրի 1864 թ. համարում մեր ուշագրությունը դրավեց Բերմեի «Պետական խորհրդական Պ. Կովալենսկու նոթերը վրաստանի մասին» հոդվածը։ Այս նոթերում կարևոր տեղեկություններ կան նաև երևանյան

35 E. Xydon, *ibid.*, էջ 82—83։

36 Նույն տեղում, էջ 100—101։

37 Նույն տեղում, էջ 113։

38 Նույն տեղում, էջ 118։

արշավանքի վերաբերյալ: Ավելացնենք միայն, որ Պ. Կովալենսկին ռուսական արքունիքի ներկայացուցիչն էր Վոսաստանում, դեպքերի անմիջական ականատեսն ու մասնակիցը. «Բաբախանը (պարսից շահ—Զ. Զ.) տիրանալով դահին,—գրում է նա,—Մամադից մշտապես պահանջում էր նախորդ տարիների հարկերի վճարում՝ տարեկան 100 հազար ռ. և ավելին: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, նա ցանկանում էր Մամադին դուրս բշխի իր տիրույթներից և դռավել նրա ամրոցն իր զորքով, սակայն սա խուսափում էր ամենատարբեր պատճառաբանություններով և հետագայում, երբ պարսից բանակի առաջապահ ջոկատը պաշարեց բեդդը, Մամադ խանը ձևականորեն հայտնեց, որ Բաբախանի պահանջվող հարկն ամբողջությամբ կվճարի»³⁹:

Ուշագրավ է նաև խորհրդականի այս գրառումը. «Հայ պաշտոնյաներից Երևանի խանի հարգանքն էին վայելում Գաբրիել յուզբաշին, խիստ ուշիմ մի մարդ, ինչպես նաև մելիք Աբրահամը, որը վայելում էր թե՛ ժողովրդի և թե խանի մեծ հարգանքը: Վերջինիս հետ ես նամակագրական կապի մեջ էի,—գրում է Կովալենսկին,—և կարծում եմ, որ նա, ինչպես և ողջ հայությունը, մեծ հավատարմություն ունեին դեպի Ռուսաստանը»⁴⁰: Դժվար չէ նկատել, որ Գ. Խուբովը փաստերը չի հորինում կամ չափազանցում: Նրա հաղորդած տեղեկություններն այլ աղբյուրներով ևս հաստատվում են: Մի խոսքով՝ բերում գտնվող հայ մեծամեծները, ինչպես նկատեցինք, միանշանակաբար կարող էին համոզել խանին ռուսական կողմնորոշման մեջ, մանավանդ, որ հանդամանքները դրա համար լիովին նպաստավոր էին: Ահա թե ինչպես է բնութագրում Պ. Կովալենսկին Մամադ խանին. «Երևանի տիրակալը միջին տարիքի, կարճահասակ, հաստատուն և չափավոր բնավորության տեր անձնավորություն էր՝ սիրված իր հպատակների, հատկապես՝ հայերի կողմից, որոնց նա նախապատվություն տվեց իր ցեղակիցներից՝ պարսիկների վերջին պաշարման ընթացքում»⁴¹: Ավելացնենք նաև, որ փաստերը հավաստող պետական խորհրդական Պ. Կովալենսկին պատահական մարդ չէր և հետևաբար նրա հաղորդած տեղեկությունները արժանի են լուրջ ուշադրության. «Վերջին տպահյուսիսը,—գրում է նա,—Մամադ խանը իմ հանդեպ հարգալից վերաբերմունք էր տալիս: Նա երբեմն նվերներ էր ուղարկում, և մենք շարունակում էինք բարեկամական նամակագրությունը: Իմ հարաբերությունները խանի հետ առավել քան բարեկամական էին, և իմ ուղերձներին նա ավերաբերվում էր հատուկ հարգանքով և անկեղծությամբ... այդ ուղերձներից,—շարունակում է պետական խորհրդականը,—ականջատ էր, որ նա համոզված է կայսեր հովանավոր և ուսանանք դեպի իսլամություն տալ անցնելու ցանկությամբ»⁴² (ընդգծումը մերն է—Զ. Զ.): Դժվար չէ նկատել, որ սույն փաստերը գալիս են հավաստելու Գ. Խուբովի հայտնած կարծեքի ճշմարտությունը:

Խուբովի տեսակետը հաստատող մեկ այլ վկայություն ևս. ռուս անվանի պատմաբան Ն. Դուբրովինը «Կովկասում ռուսական տիրապետության և պատերազմների պատմություն» ճավայուն աշխատության մեջ անդրադառնալով այս հարցին, տալիս է հիմնավոր պատասխան: Ամենից կարևորն այն է, որ նրա հոդվածներում հաստատվում են արխիվային վավերագրերով: Այսպես՝ քննարկելով հարցը, Ն. Դուբրովինը հավաստում է, որ Պարսկաստանում էլ խոշոր կաշարական տոհմը թշնամաբար էր տրամադրված Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խաների նկատմամբ, և արդյունքում ճշմարտ խանությունների տիրակալները ստիպված էին հակվել դեպի Ռուսաստան. «Հունվարին Երևանում (1802 թ.—Զ. Զ.) լուր ստա-

³⁹ Кавказский календарь, 1864, с. 198.

⁴⁰ Նույն տեղում, էջ 200:

⁴¹ Նույն տեղում, էջ 197—198:

⁴² Նույն տեղում, էջ 199:

վեց, թե Բարսա խանը,—գրում է Ն. Դուրրովինը,—եր հրամանատարներից սեկին՝ Արաս-Ղուլի խանին, հրամայել է շարժվել Թավրիզ և Իռն միացնելով այնտեղի ղորարանակը՝ ճանապարհվել Նախեջևան։ Արտաքսելու այնտեղի խանին (Քալբալին—Հ. Հ.), Արաս-Ղուլին պետք է դառնար նրա անդր։ Այնուհետև, եթե Երևանի խանը չկատարեր Պարսկաստանի տիրակալի պահանջները, ապա Արաս-Ղուլի խանին հրամայված էր շարժվելու նաև Երևան, ուր ե խոստացել էր ժամանել ինքը՝ Բարսա խանը։ Երևանի խանը,—շարունակում է Դուրրովինը,—պատրաստվում էր պաշտպանության ե օղնության սկսկալիքով սուրհանդակ ուղարկել Լաղարևի մոտ։ Խանի գրությունում հաղորդվում էր, որ Երևանի խանությունը ճանաչվում է Վրաստանի լաղկացուցիչ մասը, իսկ իրեն համարում է ռուսաց կայսեր հպատակը»⁴³։

Դուրրովինը միաժամանակ տեղեկացնում է, որ գնդապետ Լաղարևն այդ հարցում պատահական անձ չէր. նա մեծ ազդեցություն ուներ Կովկասում, ե կայսեր հատուկ հանձնարարությունները կատարվում էին անձամբ նրա միջոցով։ Չսպասելով պատասխանի, Երևանի Մամադ խանը կրկին դիմում է Լաղարևին ե հաստատում իր որոշումը. «...խնդրելով հովանավորություն ե թույլտվություն՝ բնդունելու հավատարմության երդում, համոզված լինելով,—գրում է Դուրրովինը,—որ մեր ղորքերը կպաշտպանեն նրան ե իր թշնամիներից այլևս վտանգ չի սպառնա»⁴⁴։

Ուղարկության վ արժանի Ն. Դուրրովինի մեկ այլ վկայություն ևս։ Այնպես որ կայսրի՝ կառավարչապետ Կնորինգին ուղղած հրահանգում ասվում էր. «Բոլոր դեպքերում այդ տիրակալի (Երևանի խանի—Հ. Հ.) հավատարմությունը Վրաստանի համար օգտակար կլինի, իսկ ներկա պայմաններում այն անհրաժեշտ է»⁴⁵։

Ռուսամասիրողների ուղարկությունից, ցավոք, վրեպել է նաև Ն. Դուրրովինի վկայած՝ Կնորինգի վավերագիրը. «Չնայած գաղափարի՝ Հանձնարարական՝ կայնդիայ խորհրդական Սոկոլովին. «Շնարավոր է, որ—ասվում էր հանձնարարականում,—Երևանի խանը վրացու կամ հայի միջոցով զանկություն հայտնի կայսեր կողմից արժանանալու շնորհի և հովանավորության, քանի որ այդ մասին նա արդեն հայտնել է գեներալ-լեյտենանտ Կնորինգին, որն իր հերթին տեղեկացրել է կայսեր մեծությանը։ Դուր պետք է հավաստեք, որ կայսրը երբեք չի հեռավորում բարին արարելու իր մտքից և որ կայսրը համար, անշուշտ, հաճելի կլինի իր հովանավորությանն ստանալուն ինչպես իրեն, այնպես էլ նրան ենթակա ժողովրդին՝ դրանով իսկ... խաղաղություն պարգևելու նրա տիրույթներին»⁴⁶։ Նույնն է վկայում նաև Պ. Բուտկովի այս գրառումը. «4-ր հուլիսի 1804 թ. Երևանից (Յիցիանովին—Հ. Հ.) ներկայանում է պատվիրակ՝ խանի կողմից հատուկ գրությամբ Խանը անկեղծ ցանկություն էր հայանում Ռուսաստանի հովանավորության տակ գտնվելու և պատրաստակամ էր վճարելու վեց տարվա հարկը»⁴⁷։

Մեր պատմագիտության մեջ ընդունված է ընդհանրապես անարդյունք համարել Երևանյան առաջին արշավանքը։ Իսկ խուբովը, վերլուծելով արշավանքը, այսպես է գնահատում նրա նշանակությունը. «Մի կողմից կահասարկ երևանյան առաջին արշավանքը։ Իսկ խուբովը, վերլուծելով արշավանքի սկզբում առիթ տվեց պարսիկներին արդքան ժամանակ դիմադրելու, սակայն հայտնի է նաև, թե նա հետագայում ինչպես տեղի խաներին և

⁴³ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. 3, СПб., 1886, с. 438.

⁴⁴ Նույն տեղում։

⁴⁵ Նույն տեղում, էջ 440։

⁴⁶ Նույն տեղում, էջ 541։

⁴⁷ П. Г. Бутков, Изв. архив. докум., т. 3, էջ 376—377։

անդամ շահին ենթարկեց մեծագոյն վախի»⁴⁸։ Խուրովի հաղորդած այս տեղեկութիւնը ես արժանի է ուշադրութեան. «Թաղաժառանգ!՝ Երևանի բերդում գտնվելու ժամանակ,—գրում է Խուրովը,—նրա հետ էր ջուլֆացի հայ Ոսկանը, որն իմ հրավերով հյուրընկալվում էր մեր տանը... նրանից ես տեղեկացա, որ շահը Ջուլֆայով անցնելու ժամանակ բնակիչներին հրամայել էր սեղ պատրաստել... Երևանի հայերին այնտեղ տեղավորելու համար, որպեսզի դրանով հայերին իր կողմը գրավի»⁴⁹։

Խուրովի դրքում նկարագրվում են նաև Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի իսլամիստների ռուսական տիրապետութեան տակ անցնելու իրադարձությունները։ Խուրովը հաստատում է, որ «Ղարաբաղի հայերն ամեն տեսակ օգնություն էին ցուցաբերում ռուսական բանակին։ Յիցիանովի զորքը լավ վիճակում էր, քանի որ հայերը նրան մատակարարում էին ամեն տեսակ մթերքներ»⁵⁰։ Գրքի ազարտին հեղինակը համառոտ տեղեկություններ է հաղորդում պատմական Հայաստանի մասին։

Այսպես է եղել քաղաքական իրադրությունը երևանյան առաջին արշավանքի ժամանակ։ Իսկ թեմային անդրադառնալու մեր ցանկությունը առիթ էր կրկին անգամ կարևորելու պատմական այդ հիշարժան իրադարձությունը, թերևս ինչ-որ փաստեր շարունակելու կամ թեկուզ լրացնելու ակնկալիքով։

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ ПРИСОЕДИНЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ

(Первый ереванский поход по описанию очевидца)

А. Ж. ОГАНЕСЯН

Р е з ю м е

Первый Ереванский поход в русско-персидской войне 1804—1813 гг. неоднократно рассматривался в историко-географических исследованиях. С одной стороны, неудача Ереванского похода рассматривается как следствие нерешительных действий командующего русскими войсками генерала Цицианова, с другой—как результат коварства Ереванского хана Мамада. Однако вне поля внимания исследователей осталось описание непосредственного участника и очевидца этих событий. Автором этого описания был князь Е. Хубов (Хубяи). Его книга «Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние 30 лет, 1779—1809 гг.», была опубликована в Петербурге в 1811 г. Армянский оригинал этой книги пока не обнаружен.

Согласно Хубову, приверженность Ереванского хана России объясняется не коварством и желанием выиграть время, как представляется в историко-географических исследованиях, а стремлением сохранить свое положение, что и было обещано ему русским царем.

Его отношение к русским объясняется сугубо личными интересами, но ни в коем разе какой-либо внешнеполитической ориентацией.

⁴⁸ Е. Хубов, նշվ. աշխ., էջ 82։

⁴⁹ Խուրով տեղում, էջ 96։

⁵⁰ Խուրով տեղում, էջ 108։